

ժառանգի մը անհրաժեշտ կարեւորութիւնը և իր պաշտօնին գոյնար կողմերը:

Շնորհակալութեամբ թուեց բոլոր այն լինկ-Մարմինները կամ անհատները, որոնք հաճած էին ազնիւ մտածութեամբ մը, աշակերտաց համար ամալերը պարգեւներ ղրկել. Միւլ-Թարեան Միաբանութեանս Աբբաճայրը՝ Գերպ-Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան, որ ղրկած էր մէկ ոսկի և երկու արծաթ մետաղ՝ բարի վարքի մէջ ընտիր հանգիստացող աշակերտներուն: Յետոյ, Բարիքի քաղաքապետութիւնը, Alliance Française, Խաչապետեան, Մ. - Ռ. Աշակերտաց Միութիւնը, Պր. Պարկըրճեան, Հ. Բարեգործական Ընդհ. Միութիւնը, Ելեւմտական յանձնախումբ Բաֆֆի, Պր. Տերան Լուսարարեան, Պր. Ա. Նաւարեան, Miss. Gardiner փութացած էին իրենց ընծաներով:

Հետեւեալ ցուցակը կը ցուցնէ ամբողջ աշակերտներուն մէջ վարձատրուած քաղաքային ներքին բաժնուած իրենց դասարաններուն:

- Բ. Դասակ. — Ստեփան Պողոսեան Ա.
Յովհաննէս Յովակիմեան Բ.
Քրիստափոր Ուլուհոճեան Գ.
- Գ. Դասակ. — Մուրադ Նոստրեան Ա.
Վարուժան Պողոսեան Բ.
Այսնեան Գերգ Գ.
- Դ. Դասակ. — Դառնիկ Խաչատուրեան Ա.
Վաղարշ Խաչատուրեան Բ.
Յակոբ Յովակիմեան Գ.
- Ե. Դասակ. — Գրիգոր Փափազեան Ա.
Ստեփան Կիրճեան Բ.
Պօլոս Շահրիկեան Գ.
- Զ. Դասակ. — Յովհաննէս Դաւութեան Ա.
Փերայր Հէքիմեան Բ.
Մանուկ Կերակոսեան Գ.
- Է. Դասակ. — Յովհ. Տէր-Արսլանեան Ա.
Վարուժան Գոյունեան Բ.
Յակոբիկ Խաչապետեան Գ.

Բարի վարքի և ջանասիրութեան արծաթ մետաղ մրցանակի արժանացան Բ. դասարանէն Յովհաննէս Յովակիմեան և Ե. դասարանէն Գրիգոր Փափազեան:

Վարձարանի Տեսուչ՝ Հ. Սահակ Վրդ. Տէր-Մովսէսեան հուսկ բանքն ըրաւ ծանրանալով այն տեսակէտին վրայ՝ թէ ընտիր դաստիարակութեան մը հիմը ընտանիքին մէջ կը գրուի:

Նախ, և գալոյցին մէջ կը կատարեւորորոշուի: Ասկէ մեկնելով կարեւոր յանձնարարութիւններ ըրաւ ծնողաց ու երջանիկ արձակուրդի օրեր մաղթեց բոլորին:

Բարձրաստիճան հիւրերը արժանաւորապէս հիւրասիրութեան յետոյ Վարձարանի գահէն ճին մէջ ու մեկնեցան լաւագոյն սպաւորութիւններու տակ:

Հ. Մ. Տ.

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ — ՎԵՆԵՏԻԱ

Վայրավատին Հայութեան մէջ՝ կարօտ գիտութեան և բարոյականի լոյսերուն և Հայրենիքի սրբութեան՝ Մուրադ-Ռաֆայէլեան դարաւոր Հաստատութիւնը կը շարունակէ կատարել իր ազդեցին սրբարանի գերը: Եկող բախտաւոր հայ տղան կը գտնէ հոն արդարեւ մայր Հայրենիքի մը մէջ վայելելիք բոլոր բարիքները և գիտութեան և բարոյականի առատ լոյսեր:

Ի հեճուկս աշխարհի խառնաշփոթութեան և անտեսական ճգնաժամերուն, Մուրադ-Ռաֆ. վարձարանը իր յարկին ներքեւ կ'ամփոփէր այս տարի շուրջ 51 աշակերտներ, որոնց կէսը ձրիավարժ աշխարհիս չորս անկիւններէն. Ռուս մանկայէն, Կ. Պոլսէն, Սիւրիայէն, Եգիպտոսէն, Ֆրանսայէն և Միացեալ Նահանգներէն, հուսկ կարեւոր թիւ մ'ալ Խաչապետեան կայսրութեան հողերէն՝ Ատախ-Ապէպայէն, որոնց համար յատկապէս մեծ բախտաւորութիւն է հոս ստանալ տոհմային կրթութեան և գիտութեան հետ Խաչապետեան լեզուն և քաղաքակրթութիւնը, լաւագոյն պատրաստութիւն՝ կարեւոր գիւրքեր գրաւելու իրենց վերագարձին նոյն կայսերական երկրին մէջ:

Որքան որ Տեսութիւնը կամքէ անկախ պարագաներու և տեղոյն քաղաքական անանկալ համախմբումներու պատճառով ներքին և մտերիմ շրջանակի մէջ կը կատարէր տարեկան ընդհանրական շրջանը կ'աւարտէին 11 հոգի:

Մտերմական հանգէտին կը նախագահէր Մը-Խիթարեան Ռաֆայի լինգ. Աբբաճայրը՝ Գերպ-Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան:

Քանի մը խմբերգներու ընդմիջումներուն շրջանաւարտներէն՝ Առան Գասպարեան Փրանսէ-

րէն, Զաւէն Մնտիկեան Հայերէն՝ հրաժեշտի զգածուած ու խանդավառ խօսքեր ըսին. շեշտելով իրենց բախտաւորութիւնը, միանգամայն եւ ըրաւ խաղաղութեան պարտքը: Վերջինը կ'ըսէր «Մեծն Միլիթար... պայծառ միտք, անխոնջ հանձար. Զահ գիտութեան, որ գիտցաւ Ազգին վերածնունդի կոթողը կերտել: Տգիտութեան ու խաւարի մէջ ապրող ու կռուող ժողովուրդի

մը կենսունակ ոյժ ներարկեց. բարձրացուց. կանգնեց ու ստեղծեց հայուն նոր փառքը: Շարունակեցին այս փառապանծ կերտումներն աշխատութիւնը իր արժանաւոր յաջորդները, որոնց միացան երկու գէմքեր - Մուրադ և Ռաֆայէլ: - Վառուած Հայրենիքի և Կրօնքի սիրով իրենց ազգասէր գաղափարները իրագործելու համար բարեգործական շարժումներ ստեղծեցին:



ՄՈՒՐԱՏ-ՌԱՓ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԿԵՆԸ ԵՒ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐԸ 1938ԻՆ

Ա. կարգ՝ կեդրոնը, ձախէն աջ.
Գերգ. Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ — Հ. ԳԱՐԵԳԻՆ Վ. ԼԱԶԱՐԵԱՆ՝ ՏԵՍԱԿԱՆ — Հ. ՍԵՐՈՐԷ
ԱՔԸԼԷԱՆ՝ ՓՈԽ - ՈՍՏՈՒՄԱՅԵԱՆ

Ա. կարգ, նստած, ձախէն աջ.	Տեղալ	Ի	Գ. Պոլիս	1921	մուտք ի վրժ.	1933
ԳԱՅՊԱՐԱՆ ԱՌԱՆ	»	»	Տուրաճոյ	1920	»	» 1931
ՊԱԼԵԱՆ ԼՈՒԴՈՒԿ	»	»	»	»	»	»
Բ. կարգ, կանգ, ոտքի.	»	»	Միլամ	1921	»	» 1932
ՄՆՏԻԿԵԱՆ ԶԱԽԷՆ	»	»	Միլամ	1920	»	» 1933
ՐԱԶԱՐԸԳԼԵԱՆ ՎԱՅԱՆ	»	»	Քրասնոտար	1920	»	» 1933
ԱՇՐԱՅԵԱՆ ՅՈՎԱԷՓ	»	»	Գ. Պոլիս	1920	»	» 1935
ԿԵՐԷԼԵԱՆ ԳՐԻԳՈՐ	»	»	Գ. Պոլիս	1921	»	» 1933
ՓԱՓԱԶԵԱՆ ՀՈՒՔԱՐՏ	»	»	Ատաքա	1919	»	» 1934
ԳՈԶԱՆԷԱՆ ՄԱՄԱՍ	»	»	Գ. Պոլիս	1919	»	» 1933
ՔՆՐՈՐԵԱՆ ՅԱՊՈՐ	»	»	Կալիպթա	1918	»	» 1933
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԳԵՈՐԳ	»	»	Գրգիլամ	1919	»	» 1936
ՔԱՐԱՊԱՏԱՔԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	»	»	»	»	»	»

«Կրթեցին հայ երիտասարդութիւնը, ազնուացուցին անոր կրօնական և հայրենասիրական զգացումները և սորվեցուցին այլազան գիտութիւններ. իրենց ամենամեծ կոթողը ահա դար մը կ'ապրի: Ամբողջ դար մը հայ ժողովուրդը յաջողաբար ունեցաւ գրագէտներ, դիւանագէտներ, արուեստագէտներ, բժիշկներ, մեծ գէմբեր. — Ո՞վ տուաւ զանոնք: — Մ. Ռ. վարժարանը: Վկայ պատմութիւնը:

«Եւ այդ վկայութեամբ է որ մենք հոս կերտուեցանք, ու այն շունչը որ հիմա մեր մէջ կ'ապրի ու կը խօսեցնէ զմեզ՝ Մխիթարի հոգին է, զոր կ'ուզենք ամէն կողմ արծարծել: Խոստում մըն է այս. խոստում՝ բխած մեր սրտին ամենախոր ծաւրէնէն, որովհետեւ մենք, այո՛, հպարտ ենք այսպիսի Հաստատութեան մը մէջ գտնուելուն համար. քանի որ հոն ազնիւն ու բարին, բարձր ու նուիրականը իրարու յաջորդելով անխնայ ու յարատեւ՝ զմեզ աւելի վեր, աւելի վեհ գաղափարականներու կը մղեն: Մենք գիտակից էինք, այս երկար տարիներու ընթացքին մեզի Համբուած ուսման նպատակին. և նոյնպէս գիտակից ենք մեզի համար քրտնածոր զոհողութիւններուն, և այս գիտակցութիւնը մենք կը պարտինք մեր Բարերարներուն և Մխիթարեան Հայրերուն որոնք անգուշ աշխատեցան մեր բարեբեր համար, բարձր գաղափարականէ մը մղուած, որ է, կրթել նոր սերունդը, որովհետեւ նա ազգին նոր կեանքն է:

«Ազգ մը լի մեռնիր երբ իր երիտասարդութիւնը լաւ կերպով կրթուած է...»: —

Ծնորհակալութեան խօսքեր ուղղեցին յատկապէս Գաստիարակ Հայրերուն, չքնաղ Վենետիկին՝ որ անմոռաց պիտի մնար իրենց մէջ, ազնիւ իտալական ազգին, Բրանս. պետութեան որ այնքան հոգ ունէր մեր վարժարանին վրայ:

Եւ հոսկ եղբայրական խրատ ու քաջալեր մնացողներուն՝ որ գիտնան գնահատել վարժարանին բացառիկ գերքը, սիրեն զայն ու օգտուին՝ հետեւելով Մխիթարեան Հայրերու ազգասէր ու լուսաւոր առաջնորդութեան:

Յանուն մնացող աշակերտութեան՝ Մանուկ Էթմէքճեան սրտագին ողջերթ մաղթեց և յաջողութիւն՝ շրջանաւարտ իր ընկերներուն:

Ապա, վարժարանին Փոխ-Ուսումնապետը Հ. Սերոբէ Սեբըլեան համառօտ տեղեկատուութիւն մ'ըրաւ տարեկան ուսումնական - կրթական ընթացքին, յայտնեց Տեսչութեան շնորհակալութիւնը իտալ. և Բրանս. պետութեանց հոգածութեան, ուսուցչական մարմնին եռան-

դուն աջակցութեան, յառաջագէմ աշակերտութեան՝ տարւոյն մէջ ձեռք բերած յաջողութեանց համար:

Ապա կարգաց մի առ մի անունները շրջանաւարտներուն, որոնք խանդավառ ծափերու և ծնողաց արտասուածախառն գոհութեան և համբույրներուն մէջ կ'ընդունէին վկայականները:

Խորին շնորհակալութեամբ կ'արձանագրենք հոս Մուրադ-Ռաֆ. Ն. Ա. Մխիթարեան Հայրեր գիտութեան համար յատկացուցած նուէրը՝ որուն արժանացաւ հայերէնի մէջ յաջողագոյններէն Մանուկ Էթմէքճեան:

Ռաֆայէ Գերալ. Աբբաշայրը բոլորին խանդավառութեան մէջ կը փակէր հանգէսը գեղեցիկ խօսքերով՝ զորս կ'ամփոփենք հոս. «Մուրադ և Ռաֆայէլ, ըսաւ, իրենց անունն և փառքը կ'ապած են այս Հաստատութեան, գիտնալով թէ այդ կերպով էր որ լաւագոյն ծառայութիւն մը պիտի մատուցանէին Հայ ազգի գաւառին. լաւ գիտցան թէ առանց մշակոյթի և կրթութեան ազգը կը մեռնի. գիտցան զայդ ու լաւ գիտցան իմաստութեամբ գտնել մշակներ որ կենդանութիւն տային իրենց պատրաստած հողին. այդ հողին վրայէն անցաւ Մխիթարայ շունչը և լոյս ու կեանք էր որ բխեցուց:

«Չեմ կարծեր որ մարդ մեծագոյն գոհունակութիւն ունենայ քան այն որ առաջ կու գայ բարերարութենէ. անոր ճառագայթումին մէջ է որ ահա երկու Բարերարներն ալ կը հրճուին ու կ'անմահանան:

«Օրհնեալ ըլլան Բարերարները որ գիտցան կերտել այս լոյսի տաճարը. օրհնեալ ըլլայ առնոց յիշատակը իրենց անուան անմահութեամբ:

«Օրհնեալ ըլլան անոնք որ իրենց նիւթական ու կորստական հարստութեան կրցան աննիւթ հոգի զգեցնել ու զայն յաւերժացնել:

«Այս նկատողութիւնները նշանակութիւն պիտի չունենան եթէ մեր հոգւոյն մէջ ալ չվառեն տենչը մեր հայրենիքին ծառայելու՝ ըլլայ նիւթական ըլլայ բարոյական միջոցներով:

«Դուք, սիրելի աշակերտներ, դուք որ անոնց սիրոյ և բարութեան ծաղիկներն էք, անշէջ պահեցէք այդ հուրը, հետեւեցէք իրենց օրինակին: Դուք պարտաւոր էք պատուար կանգնել ու ծաղկանալ ու այլասերման գէմ՝ ձեր ընտանիքին մէջ, ձեր գաղութներուն մէջ՝ խօսքով թէ գործով: Դուք կը թողուք այս սրբավայրը ուր այնքան տարի աշխատեցաք ու կազմեցիք թեւեր ձեր մտքին ու սրտին. արդ պատրաստ էք թուիչ առնելու: Գնացէք միշտ ձեր բարե-

րարներուն, ձեր գաստիարակներուն մասնանշան ձանձաղարհէն: Չեմ տարակուսիր թէ դուք պատիւ պիտի բերէք ձեր ընտանիքին և ազգին: Նրիտասարդ էք լի կամքով և ուժով. մի երազէք երջանկութիւն առանց զոհողութեան: Չեղի պատուէր. Սիրեցէք ձեր վարժարանը, ձեր Ազգը, ձեր Հայրենիքը»:

ԽՄԲ.

ՄԻԽԹ. ՎԱՐԺԱՐԱՆ - ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱ

Իր գոյութեան երկրորդ տարին և հետեւաբար երկրորդ հունձքն է որ կը քաղէ նորահաստապս կրթարանը, որուն համար Մխիթարեան Միաբանութիւնը ճիգեր չի խնայեր. հա այս տարին ուսուցչական նոր և ընտիր կազմին վրայ տեսնեք մէկի տեղ երեք վաստակաւոր Հայրեր՝ ոգով չափ նուիրուած մեր կաւոր Հայրեր՝ զաւակներու կրթական-ուսումնական գործին: զաւակներու կրթական-ուսումնական գործին: Այդ զոհողութեան փայլուն արդիւնքները տեսնեք տարեկան շրջանին ըլլայ ուսումնական սանք տարեկան շրջանին ըլլայ ազգային տոներու և թատերադրան, ըլլայ ազգային տոներու և թատերական և այլ հանգէսներու մէջ:

Կը մնայ որ գաղութս ալ և մանաւանդ որոնք ի կարողութեան են՝ գործակցին մեր վաստակաւոր Հայրերուն նիւթապէս և բարոյապէս, և օր առաջ տեսնենք Մխիթարեան սեփական վարժարանի մը շէնքը և օրհնենք յաւերժապէս անունն և գործը նոր Մուրադներու և նոր Ռաֆայէներու:

Յունիս 26ի կիրակին առաւօտեան ժամը 10ին տեղի ունեցաւ ամալերջի հանգէսը Սալեզեան Հաստատութեան ընդարձակ սրահին մէջ:

Հրաւիրեալներու բազմութեան մէջ կային իտալացի և Ֆրանսացի փոխ հեւապատուները, եկեղեցական անձնաւորութիւններ, վարժարանին բարեկամներն ու աշակերտներու ծնողքները:

Ի սկզբան Մխիթարեան նուագախումբը Պ. Ե. Ալեքսանեանի ղեկավարութեամբ յաջողութեամբ լսեցուց «Ախ մարալ ջան»ը և «Իմ չինարի եարը». ապա եղան արտասանութիւններ զանազան լեզուներով, «Le bourgeois gentilhomme»ի մէկ կտորին Ֆրանսերէն ներկայացուցւոյ, «Լոյսի և խաւարի պայքարը» եղանակաւորուած Հ. Գեորգ Ոսկեանէ, և զանգակներու պարը՝ խնամքով պատրաստուած Օր. Թ. Մարտիրոսեանէ:



Աղիքսամողրիոյ Մխիթ. Վրժարանի Սրահին խումբ և իրենց պետերը Տեսչութեան հետ